

Ա.ԱՆՎԵԼՅԱՆ

ՑԱՐԱԿԱՆ

ՊԱՏՎԵՐՆԵՐ



391.99
Հ-27

ՊԵՏՎՐԱՆ 1935 ՅԵՐԵՎԱՆ



14 FEB 2011

891.99
5-27

Ա. ՄԱՆՎԵԼՅԱՆ

այս.

1/p

ՊԱՏԿԵՐՆԵՐ
ՑԱՐԱԿՈՆ ԲՈՆԱԿԻՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1984

24 JUN 2013

7705 833 11

42034

Պատ. Խմբագիր՝ Մլոխար Դավթյան
Հապիկը յեղ նկարները նկարիչ՝ Ս. Առաքելյանի
Տել. Խմբագիր՝ Տ. Խաչվանեցյան
Սրբագրիչ՝ Պ. Արայիս

ՖԵԼԴՅԵՖԵԼ ԽԱՏԻԵՆԿՈ



4536

39

Գլուխու № 8611 (Բ), հրատ. № 3044 պատվ. № 1063,
սիրած 3000. հանձնված և արտադրության 20 հունիսի 1934 թ.
ստորագրված և տպագրության 12 Խ 1934 թ.

Գևահը պատվ. տպարան Յերևան

Յինդ թե վեց տարեկան եր, յերբ խոլեռայից մեռավ հայրը, մի քանի որ հետո ել մայրը:

Փոքրիկ Խատիենկոն մնաց առանց ծընողների, իսկ նրա հոր մահվանից հետո՝ գյուղը յերկու ամիս առանց տիրացուի, մինչև մի արժանավոր փոխանորդ գտնվեց և մոռացության տրվեց հանգուցյալը, վորի բասը, շատ ողի խմելուց, ճաքած կարասից յելնող ձայնի նման, դուրս եր գալիս նրա կոկորդից, և փոքրիկ փայտաշն յեկեղեցին գմբրմբում եր նրա ամպագոռոցու տերվողորմյա, տերվողորմյաից...

Փոքրիկ Խատիենկոն մեծացավ սրա նրա առանը, մի որ ել սթափվեց և տեսավ, վոր արդեն 21 տարեկան ե դառել: Կանչեցին զինվորագրության, վիճակ քաշեց և զինվոր ընկավ:

Գուղը ուրախ եր, վոր վերչապես կազմագիր այդ ստահակից, այդ աներես լակոտից:

Յերբ նա դեռ փոքր եր, քարերով սրա պատուհանի ապակիներն եր ջարդում, հավ ու սագերի վոտը կոտրում կամ ուղղակի

սպանում: Վոչ խրատ, վոչ ծեծ, վոչ նույն-
խկ որերով քաղցած ու ծարավ պահելը՝ այդ
բոլոր պատիժները մնում եյին անհետեանք:
Ընդհառակը, կարծես, ավելի համարձակ ու
լկտի եյին դարձնում նրան:

Զեռները, կարծես, քոր եյին զալիս, ան-
պայման մի պատճառ կզտներ մեկին խփելու,

Ջիկներ չգիտեյին ինչ անեն, վոր հանդիսա
թողնի նրանց: Մի որ ել, կիրակի հարձակվե-
ցին վրան և մի լավ զնդստեցին: Մի քիչ ել
գող եր: Ընդհանրապես ծույլ եր աշխատանքի
մեջ, բայց վոր միտքը զրեց, մի ժամում ու-
րիշների յերեք ժամվա արածը կաներ: Նրա
զինվոր ընկնելը գյուղի համար մի տոն եր:
Հանդիսա շունչ քաշեց և մտածեց, վոր իրա
համար ել լավ կլինի. զինվորական կյանքը
նրան մարդ կդարձնի, թավիչ կդառնա:

Կիսագրագետ եր, յերբ իբրև նորակոչիկ,
գունդ բերին: Այսպես կիսագրագետ ել մնաց,
թեև ութ ամիս սովորեց զնդի ուչերնի կաման-
դայում, և իբրև յեֆրեյտոր կրկին վաշտ վե-
րադարձավ:

Բորենու կլոր, հիսկողող աչքերով, կարէ
խուզված վոզնու վշերի նման ճակատի կող-
մը ցցված, իսկ ծոծրակը №0 մեքենայով
խուզած այնքան խորը, վոր ինչպես հնձած
արտ, գեղնագույն վշերի միջից յերևում եր
նրա գլխի վարդագույն մորթը: Փոքրիկ բե-

խիկների ծայրերը սրած, կարմրաքիթ, մոտ 26
տարեկան, կարճահասակ, ջլուտ տղա յեր
կատիկներոն: Համեմատարար կարճ ժամա-
նակամիջոցում նա յեֆրեյտորից դարձավ
յերկու թելանի ունտեր, քիչ անց՝ յերեք թե-
լանի, մի տարուց հետո ել Փելդֆերել:

Թելդֆերելի կոչմանը հասնելու համար
նա ջանք չխնայեց սիրելի դառնալու ապա-
ներին: Շողոքորթ, քուտ, խոնարհ, մեծերի
մոտ ստրուկ, իսկ գազան՝ ստորագրյալների
մոտ: Վաշտի ահն ու սարսափն եր, բոլորը
գողում եյին նրանից:

Նրա վաշտը գնդում համարվում եր որի-
նակելի, իբրև դիսցիպլինար, իբրև հրացա-
նաձիգներ: Նա Փելդֆերելության հասնելու
համար, Յ մարդ ծեծելով, մյուս աշխարհը
ճամբեց, չորս հոգու հիվանդության պատ-
ճառով տուն, մի քանիսին ել՝ դիսցիպլինար
գումարտակ, վորոնց ամեն ըովե կարելի յեր
հրամայել վարտիկն իջեցնել, պառկեցնել յե-
րեսի վրա և ճիպոտներով 25 հարված ընդու-
նել հետույքին՝ ամենաաննշան հանցանքի
համար, դա համարվում ե պատիժ առանց
դատի, իսկ 25-ից ավելի մինչև 200-400հար-
վածի համար պետք ե դատ լիներ:

Ցերք մեզ իբրև նորակոչիկների գունդ բե-
րին, նա արդեն յուր փառքի գաղաթնակետին
եր հասել և հպարտ, քիթը վեր ցցած, արագ
անցնում եր (ի միջի այլոց նա յերբեք հան-

գիստ, դանդաղ չեր քայլում, այլ միշտ, կարծես, շտապում եր մի կարևոր գործի) հաստափեթ կոչիկների բարձր կրունկներով թակելով զորանոցի բակի մայթերը:



31 տարի անցել ե այն որից, ինչ բաժանվել եմ նրանից, մազերս արդեն ճերմակել են, բայց այսոր ել նա չի դադարում յերեմն հաւածել ինձ յերազիս մեջ: Նրա բարձր կրունկների ձայնը այժմ ել չի դադարել հնչել ուղեղիս խոր ընկած ծալքում, և առանց սարսափի ու նողկանքի չեմ կարողանում հիշել նրան: Նրան ճանաչելուց յես ակամա հարց տվի ինքս ինձ,

«մի՞թե մայիս ե ծնել սրան, կերակրել յուր կրծքի կաթով, սիրել, փայփայել, նանիկ առել, վոր քնի: Հիվանդության ժամանակ անքուն գիշերներ անցկացրել որորոցի մոտ և ազոթել արցունքներն աչքերին, թե կատաղած շնն բերանի փրփուրից ե հղացել այս ծիվաղը»:

Նա չեր ժպառում, բայց գիտեր հռհռալով ծիծաղել, յերբ տեսնում եր մեկի տանջանքը: Տանել չեր կարողանում, յերբ մեկը, մի դըժ-բաղդ լուր առնելով տնից, լալիս եր. նրա կարծիքով միայն կանայք իրավունք ունեցին լուր, իսկ տղամարդը, մանավանդ դիմվորը, վո՞չ:

— Առւսական բանակի զինվորիս տես, լույսիս ե կնկա պես... զգաստ, կրտնկները սեղմ, ծայրերը զատ — և ցուցամատով այնպես կհասցներ արտասկողի քթին, վոր արյունը աղբյուրի պես կթափվեր քթից, և կսկսեր հըրհուալ, զնջուավալ և բարկանալ, վոր ուրիշները շեն ծիծաղում: — Ինչո՞ւ չեք ծիծաղում... ծիծաղե՛ր... և այդ ծիծաղը շնաղացլերի քրքիջ եր հիշեցնում, քան մարդկային ծիծաղ:

Յեթե ուսւա-ճապոնական պատերազմում էենդանի մեաց, անշուշտ սպանվեց վերջին համաշխարհային պատերազմի որերին, իսկ յեթե այստեղից ել հրաչքով փրկվեց, այն ժամանակ խոսք եմ տալիս, վոր հեղափոխական զինվորները ջախջախեցին նրա պիոդ գանկը:

Պարտադիր ծառայությունը վերջացնելուց
հետո նա շատ մտածեց և վերջը վորոշեց գյուղ
չղառնալ: Վոչ տուն, վոչ տեղ, վոչ ազգական—
ինչ պետք է անի գյուղում: Այստեղ պարոնա-
վայել կյանք է վարում: Մնաց գնդում՝ իրրե-
գերակետիկ: Թեին արծաթ ճապավենի յե-
ռանկյունի կարել տվեց և մնաց գնդում կա-
մավոր, իրրե պատիժ գալիք և յեղած զին-
փորների համար: Այսոր նա, անշուշտ կենդա-
նի չե, թեև ասում են՝ մեռածի մասին կամ
լավ կամ վոչինչ, բայց ինձ թվում ե՝ դա նա-
խալաշարմունք է. յեթե նրա մասին եմ
դրում, ինչպե՞ս կարող եմ լավ բան դրել:

2

Առաջին անդամն եր, վոր Յերեանի զավա-
ռից այդ գունդը հայ նորակոշիկներ եյին ու-
ղարկում: Խախողների, կացալների, ջհուդ-
ների խմբերն արդեն մի շաբաթեր, վոր յեկել
և ցրվել եյին վաշտերում:

Յերանից յեկած մեր խումբը վերջին
ուշացած զորակոչիկներն եյին: Անկողինե-
րով, անդուկներով, կեղտատ վոչուսված մենք
կայարանից շարժվեցինք դեպի զորանոցները:

Ս. քաղաքի մեծ փողոցով անցնում եր այդ
մորթու գլխարկների, տրեխալորների խում-
բը: Հայ գյուղացին առանց այն ել չի կարող
պարծենալ մաքրասիրությամբ, դրա վրա ա-
վելացրու, վոր զինվորացուները տանը յեղած

ամենահին զգեստներն եյին հագնում, հետո ել
մի քանի որ յուրաքանչյուրը «Ճիռ կամ 40
զինվորի համար» հատկացված վագոննրում,
քրափինք, փոշի, արդեն կարելի յե յերեակա-
յել, թե ինչ վայրենի տապավորություն կարող
եր թողնել այդ վայրենիների նմանող խառնի-
ճաղանձ ամբոխը, վոր անցնում եր Ս քաղա-
քի լայն մաքուր փողոցով: Անցորդները կանգ
եյին առնում և զարմացած, հետաքրքրու-
թյամբ նայում այդ խմբի հետեւից. դուչակու-
թյուններ անում, բայց անկարող եյին վորո-
շակի ասել, թե ինչ մարդիկ են և ինչ ազգից:
Բոլորը սև աչքերով և մազերով, արարի նման
թուխ դարչնագույն մորթով: Յես և յերկու
ընկերու, վոր քիչ թե շատ տանելի տեսք ունե-
ցինք, մեր յեվրոպական տարազով դիսոննանս
եյինք մացնում այդ համերդի մեջ: Խումբը
լուռ անտարբեր, ամեն մեկը խորասուզված
յուր մաքերի մեջ, առաջ եր շարժվում:

Հոգնած, քրտնած մենք հասանք և ցած
դրինք բեռները գնդի գրասենյակի ընդարձակ
նախասենյակում և թափվեցինք մեր իրերի
վրա: Մեր առաջնորդը գնաց զեկուցելու, իսկ
նրա յերկու ոգնականները նստեցին պատու-
հանի տախտակների վրա և սկսեցին իրենց հա-
մար անսովոր, թանկագին ծխախոտներ ծլսել,
ցոր իրրե կաշառք ստացել եյին այսինչ կամ
այնինչ զորակոչիկից՝ նրանց խնդիրը հարգե-
լու համար:

Քիչ անց՝ մեր շուրջը սկսեցին հավաքվել զինվորներ . . . յեկան վաշտերի ֆելդֆելները, կարծես, մեկը հեռախոսով հաղորդեց, վոր նոր զոհեր են բերել, և տեսնելով այդ տարո՞րինակ գջլաված մարդկանց, սրախոսեցին և ծիծաղեցին:

— Արմյաշկաներ, արմյաշկաներ են, լըս-վում եր մեր շուրջը: Բոլորը հետաքրքրությամբ մեզ եյին նայում, հարցեր եյին տալիս, բայց պատասխան չստանալով, իրար մեջ սրախոսություններ եյին անում և զնջոտվում ու արհամարհանքով նայում եյին այդ անձանոթ, գջլաված ու կեղտոտ, իրար վրա թափած նորակոչիկներին, վոր վոչխարների նման իրար են սեղմվում սպանդանոցի բակում: Յերբ ըուլորը ձանձրացան նրանց դիտելուց, հայացքները դարձրին մեզ վրա . . .

— Ստուդենտներ . . .

Մի քանիսը մոտեցան մեզ և սկսեցին հարցու փորձ անել: Այդ ըստեյին մեզ յերեքիս ել մի բան եր միայն հետաքրքրում, ինչպես անել, վոր մեզ չբաժանեն իրարից: Մեզ խորհուրդներ եյին տալիս, ամեն մեկը մի բան եր տառում, ամեն ֆելդֆերել առաջարկում եր, իոր դանկություն հայտնենք իր վաշտը գնալու: Կես ժամից ավելի յեր անցել, վոր գրասենյակից դուրս յեկան մի քանի գրագիրներ, ձեռներին թղթեր, քիչ անց սպաների մի խումբ, վերջում զնդապետը:

— Վոտքի, — հրամայեց մեր առաջնորդը: — Բոլորը ծուլորեն շարժվեցին, իրար դիպչելով վոտքի յելան և մնացին տեղերումը: Կարդացին անունների ցուցակը:



Տասը, տասնհինգ քոպե նախասենյակում լովում: Ե . . . յ . . . յ . . . յ . . .

— Կանզնեցնել ըստ հասակի:

Ֆելդֆերելները, ունտերներն իրար անշան, սկսեցին գես ու դեն հրելով, սրա նրա թերց, վեշից քաշելով տեղավորել արդ բոի նորակոչիկներին յերկու տողանով ըստ հասակի:

Մի ալեխառն սպա, փոքրիկ կուչ յեկած աչքերով, պառավ կնոջ ձայնով, անցավ տո-

զանների յերկարությամբ, հրամայեց մի քանի
փոփոխություններ կատարել՝ տեղափոխելով
մի տեղից մյուսը և, մոտենալով տողանի աջ
ծայրին, սկսեց արագ համրելով առաջ շարժ-
վել.

— 1, 2, 3, 15 առաջին վաշտ. 16—30
յերկրորդ վաշտ. 31—42 յերրորդ վաշտ. 43—54
չորրորդ վաշտ: Ամեն մի վաշտի Փելդֆերել
իրեն բաժին ընկած նորակոչիկների մոտ մի
ունտեր նշանակեց:

— Նշանակել ազգանունները
Ամեն վաշտ իր նորակոչիկների ցուցակը
կազմեց:

Յերկուսս ընկանք յերկրորդ վաշտ. ինչ-
քան խնդրեցինք, վոր մեզ չբաժանեն իրարից,
չեղավ, Սուրեն Գալստյանին տարան չորրորդ
վաշտը, հասակով շատ կարճ եր:

- Վերցնել իրերը.
- Դեպի աջ,
- Դեպի աջ,
- Դեպի ձախ,
- Դեպի ձախ:

Նախասենյակը լցվեց տրեխների և չուս-
տերի քսանոցով...

Շալակեցինք մեր իրերը և շարժվեցինք
դեպի գորանոցները: Յերկրորդ և չորրորդ
վաշտերը բարեբախտաբար նույն բակումն
եյին, բայց ելի չորրորդ վաշտ ընկնող մեր
ընկերը լալով բաժանվեց մեզանից:

Ֆելդֆերել Խատիենկոն տանել չեր կաբո-
ղանում հրեյաններին, իսկ յերբ հայերը յեկան,
նրանց մոռացավ: Նրան սաստիկ ջղայնացնում
էր այն հանգամանքը, վոր նրանք ոռւսերեն
վոչ միայն չեյին խոսում, այլ սկի չեյին ել
հասկանում, իսկ ով ոռւսերեն չգիտեր, նրա
կարծիքով, ուղղակի անասուն ե:

Իսկ ինձ ու ընկերոջս, թեև ոռւսերեն հաս-
կանում եյինք, մեզ ել հենց առաջին որվանից
առեց «ստուգենաներ», ինտելիգենտներ» հա-
մարելով, իսկ նրա լեկսիկոնում «ստուգենտը»
Հայհոյանք եր— յես դրանց քիթը կկոտրեմ—
վճռեց նա. մի լավ դաղել, վոր հասկանանք,
թե ով ե Փելդֆերել Խատիենկոն: Բոլոր ուսա-
նողներին, ինտելիգենտներին նա համարում եր
զավաճաներ, ներքին թշնամիներ, վորոնցից
պետք ե պաշտպանել իրոնը, հայրենիքը և ցա-
րին: Դրանց հավատալ չի կարելի, — հաճախ
ասում եր նա պարոնայք Փելդֆերելներին:

Մի որ ստուգումից ու աղոտքից հետո,
յերբ պատրաստվում եյին պառկելու, մեր վրդ-
վողնի ունտերը վերադարձավ Փելդֆերելի
մոտից (ամեն որ աղոթքից հետո գնում եյին
նրա մոտ՝ կարգադրություններ ստանալու),
յեկավ, թե—մարչ, Փելդֆերելի մոտ:

Մենք կարգի բերինք մեզ և նրա առաջնոր-
դությամբ գնացինք դեպի նախասենյակի վեր-
ջում յեղած փոքրիկ դուռը, վորը թե վաշտի



գրասենյակն եր և թե Խատինեկոյի սենյակը:

Յերբ մենք ներս մտանք, նա նստած վորք-
րիկ սեղանի առջև, պնակից թեյ եր խմում:
Մի պնակի մեջ մաքրած կտրտած ձուկ, մյու-
սում մի փոքրիկ կտրոր սպիտակ և մի մեծ կը-
տոր սև հաց: Վզվողնի ունտերը զեկուցեց,
վոր բերել ե: Առանց դադարելու խմելը, նա
պնակի վրայից աչքերը բարձրացրեց՝ փչելով
տաք գոլորշու մրա, մի վայրկյան լուռ նոյնեց
և ելի խսկույն խոնարհեց գլուխը պնակի վրա:

Մենք լուռ ձղված կանգնած եյինք զոնե-
րի մոտ: Մի քանի րոպէ լովում եր Խատինե-
կոյի փնչոցը և չփչփացնելով ուտելու ձայնը:

Վերջապես նա, հագեցած, ցած դրեց պնա-
կը և բարեհաճեց նայել մեզ վրա: Մի քանի
վայրկյան լուռ չտիեց մեզ վոտից գլուխ:

— ԶՀՈՒՂՆԻ՞Ր ԵՔ.

— Վոչ, հաց:

— Մի շուն են:

— Ռւղղափա՞ռ.

— Լուսավորչական:

— Մահմեդական:

— Վոչ, քրիստոնեական:

— Յեռունդա: Շա՞տ փող եք բերել Հետ-
ներդ, — բալորովին անսպասելի խոսքը փոխեց
նա — մոտներդ չպահեք, նախ դյաթակլու-
թյուն ե, կարող են տեղն իմանալ և թոցնել,
մեզ կթալանեն, իրենք ել դատի տակ կընկնեն,

կարգապահական վաշտը կընկնեն խաթի մեջ
կընկնեն, այն ժամանակ՝ գերժիս ըրատ:...
Դուք դիտե՞ք, ի՞նչ բան ե կարգապահական
վաշտը...ոռողջի...փափուկ մսեր...մի որ
ցույց կտամ, թե ինչպես են պատժում... Հե-
տաքրքիր, զվարճալի տեսարան ե... Տանն ին-
չո՞վ ելիք զբաղվում:

— Ծառայում եյի.

— Դո՞ւ.

— Յես եկ.

— Ինչացո՞ւ ելիք.

— Յես գործակատար եյի:

— Յես ել հաշվապահ.

— Գրասենյակ կուղարկեմ, գրագիր կը-
դառնաք... Սպիտակ հաց՝ թեյով, քովի...
յերշիկ... Մարֆուշա ու Պելադեյա... քեֆ
կանեք: Գրագիրներն աղատ են, քեֆ են ա-
նում... Լավ գրել դիտե՞ք, ձեռագիրներդ ինչ-
պե՞ս են.

— Վոչինչ.

— Ամիսոր ինչքա՞ն ելիք աշխատում.


— 50 ոռորի:

— Բնա՞... դո՞ւ.

— 75.

Ուսո՞ւ, կեցցես: Յես ֆելլֆերել եմ,
րայց 4 ոռորի մի քանի կոաեկ եմ ստանում.
Են ել վու հասարակ ֆելլֆերել... մող...
փող... իմ ինչին ե փողը... յես ամեն բան

ունեմ. բոլորն ել պետական, լավ ուսում եմ, խմում, հաղնում... Դուք Փելդֆերել չեք դառնա, ինչպես չեք տեսնի ձեր ականջի հետեւը... Իսկ զբագիր՝ այդ ել ինձանից և կախված... Ինձ փող պետք չե... յերեի չհուդ-



ները ձեր ականջին փափսացել են, վոր ինձ փող պահ չտաք, վոր ել հետ չեք ստանա... Հա՞... որիկաներ, քրիստոսականներ... Ա՞վ եր, յես գիտեմ, մի ծածկեք...
— Մեզ վոչվոք վոչինչ չի ասել:

— Ստում եք... յես նրանց ատամները մորները կթափեմ... ստում են շան վորդիքը... Նրանք անսատված են, դուք քրիստոնյա, չափատաք նրանց: Ավելի լավ ե՝ ինչքան ունեք, տվեք ինձ, յերբ ուզնասք. կարող եք քիչ-քիչ վերցնել, թեկուզ մի անգամից բոլորը, թե չե կերցնեք, կզողանան, ինչը բոլ մեր վաշտում— զողեր... 7 հոգի տուգանվածներ կան... բան ե, թե զողացան, չգանցատվեք, մոռթներդ կջարդեմ այն ժամանակ:

— Ինձ մոտ յեղածը 5 ոռւբլի յե:

— Ինձ մոտ 3: Ինչքան վերցը ել եինք, ճանապահներ ծախսվեց: Տնից ամիս-ամիս կուղարկեն:

— Ստում եք... ջհուդներն են սովորեցրել... Ե, զրոյը ձեզ հետ, չեք տալիս, հարկավոր չե... կփոշմանեք... կրուգոմ մարշ...

Մենք դարձանք, վոր գնանք, հետեւներից թնդաց Խատիենկոյի՝ իր հորից ժառանդած մասը.

— Այդ ինչպես եք դառնում... Այս ինչպես են դառնում... դարձավ նա վզփոդնի ունտերին, — ջոկապեաին հերթից դուրս վերակարդ, մոռթը կջարդեմ... վոր վազը իմանան, թեկուզ գիւեռը մի քնիո և սովորեցրու...

— Կամ եմ, պարոն Ֆելդֆերել:

— Կորեք... հայդա...

Հենց մյուս որվանից սկսվեց մեր առաջան-

ՔԵՐ՝ ամեն դատարկ բանի համար հերթից դուրս
գիշերապահ վաշտում, խոհանոց՝ կարտոֆիլ
մաքրելու, հեռու աղբուրից ականջները ծակ
տակառով ջուր կրելու և այլն. Ծոկապետից
սկսած, բոլորը ֆերֆերելի հրամանով սկսեցին հալածել մեզ և մեր չնորհիվ հալածել
առհասարակ բոլոր արմյաշկաներին: Հերեանե-
րը մի քիչ շունչ քաշեցին:

4

Յերեկոյան 9-ից պակաս տասն բոպէ հնչեց
շեփորը:

Բոլորը թողին՝ ով ինչով զբաղված եր և
արագ դուրս վազեցին սենյակներից ու դասակ-
դասակ շարվեցին նախասենյակում:

Սկսվեց ստուգումը: 15—10 բոպէ և երը
կարծես, մըցության ելին դուրս յեկել, ամեն
ձայնի, ամեն յերանդի և երը խառնվեցին Ե-
րար:

Ստուգումից հետո կարդացվեց գնդի հրա-
մանը: Հրամանը գրեթե միշտ ինքը Փերֆերե-
լըն եր կարդում, բայց այսոր նոռ փոխարեն
կարդաց 1-ին դասակի ունտեր-ոփիցիերը, վո-
րին թողել ելին իբրև փոխանորդ:

— Աղոթքի...

Թմբկահարը զարկեց աղոթք:

— Աղոթքի համար գլխարկները հանել:

Սկսվեց «Հայր մերը»:

Դա աղոթք չեր դեպի յերկինք ուղղված,
այլ անասելի խառնիջաղանձ մի աղմուկ: Յեր-

բեք վոչ մի ոռւս մարդ այդքան վատ չի յեր-
գել:

Աղոթքը հազիվ կեսին եր հասել, վոր լսվեց
Խատիենկոյի արագ քայլերի ձայնն աստիճան-
ների վրա, քիչ անց՝ գնդակի նման ներս ընկավ
և կատաղությունից խզված ձայնով կանչեց,

— Լոե՛լ... ձայները կտրեք... այս ինչ
ե... բարդակ... գայլերի վոռնոց... քաղցած
չներ են վնդստում, վորձ կատուների կորիվ ե
տանիքի վրա, թե աղոթք...

Ճանձ թուչեր, կլսվեր, այնպիսի լոռություն
տիրեց:

— Բոնդարենկո, սկսիր.

Բոնդարենկոն սկսեց, մյուսները միացան,
բայց բան գուրս չեկավ: Վոտները գետին
խփելով, նա կրկին լոեցրեց, կրկին սկսել տվեց,
բայց սա ծաղը եր, վոչ թե աղոթք: Ինքը ըս-
կըսեց: Այս անդամ ել յերգել չհաջողվեց. կա-
տաղությունից կարմիր տաքտեղի նման կար-
մըրեց, — գոռաց ու ճչալով վազեց մինչեւ տո-
ղանի աջ Փլանդը և սկսեց համրելով առաջ
շարժվել: Չորսին բաց եր թողնում, հինգե-
րորդին ալտակում. նա արագ անցավ տողանի
յերկարությամբ ձախ Փլանդին և ճչաց.

— Առաջին տողան, յերկու քայլ առաջ
մարչ...

Նա անցավ տողանների մեջ և կրկին սկըս-
վեց աշխատանքը, և ապտակների ձայնը հնչում

Եր նախապահն յակում, կարծես, թէ մեկը քուֆ-
թա յեր ծեծում այնպես յեռանդով:

— Առաջին տողանը յերկու քայլ հետ...



աղոթք... սկսել... արմյաշկաները և ջչուգ-
ները թող լսեն... սկսել...

Վերջապես տանջանքի ազոթքը վերջացավ:

Թմբուկը դողաց թմբկահարի փայտիկներից և
լուեց:

Անհամբեր սպասում եյինք «ցրվել» խոս-
քին, վոր ծանր որ անցկացնելուց հետո անկո-
ղին մտնենք, դա մեր ամենայերջանիկ ժամն
եր: Առավոտյան գեռ լույսը չծագած, ելի պի-
տի յելնեյինք: Նա լուռ գնաց: Մի քանի քայլ
հազիվ եր արել, վոր մի բան հիշելով, կրկին
վերադարձավ կանգնեց վաշտի ճիշտ կենտրո-
նում, խողի աչքերը դես ու դեն դարձրեց, հա-
զաց, թքեց հատակին ու ճչաց.

— Զգա՛ստ...

Բոլորը ձգված լարի պես ձգվեցին:

— Վզգողնի ունտերներն ինձ մո՛տ:

Չորս վզգողնի ունտերոՓիցերներն արագ
բաժանվեցին շարքերից և մոտեցան նրան:

— Յեթե նորակոչիկները վատ են պահում
իրենց, ո՞վ ե մեղավորը. Վզգողնի ունտեր-
ներ... ում մոռւթը պետք ե ջարդել— դրան-
ցը... հասկացա՞ք: Լավ նայեցեք աչքերիս...
արդեն յերկու ամիս ե անցել, բայց պատահում
են, ինձ պատիվ չեն բռնում... յես ձեղ կողո-
րեցնեմ...

Նա բռունցքը դեմ տվեց ունտերների քթին:

— Վերջին անգամ նախազգուշացնում
եմ, ում դասակի զինվորը բռնվի, նրա հետ
միասին թէ վզգողնի ունտերին, թէ զոկի պի-
տին հասնելու յէ: Տանջեցեք, կաշիները պոկեք
և այդ հում մսից, այդ կղկղանք պատրաստող

մեքենային զինվոր դարձրեք, իսկ յեթե յեռ
սկսեմ սովորեցնել, վոչ մեկիդ ատամը բերա-
նումը չի մնա... նորականչիկների մէջ կան
այնալիսիները, վորոնց կոշիկը ծակ ե, կամ
գրեթե բորիկ են...

— Պարոն ՓելդՓերել,— հանդպնեց ուն-
տերներից մեկը, — անից բերածները մաշվել
են, իսկ պետական կոշիկներ գեռ չեն ստացել,
կարկատելու ել փող չունեն...

— Իսկ չոկոլադի համար... սակառակ հա-
ցի, յերշիկի համար... սպայական ծխախոռ
դնելու համար ունե՞ն... կան այնպիսիները,
վոր որը մի ոռուբի յեն թողնում գնդի խանու-
թում... իսկ ՓելդՓերել Խատիենկոն չոկոլադ
չի ուտում. այդ ջհուղները և արմյաշկաները
չոկոլադ են կրծում... թող զգուշ լինեն, դե-
րեզման կըշեմ, իրանց ձեռքով իրանց գերեզ-
մանը փորել կտամ... Դուք նրանց հասկաց-
րեք, վոր ինձ հետ հանաքը կարճ ե տեսում.
ասացեք, թե ով ե ՓելդՓերել Խատիենկոն,
հարազատ հորը չի խնայել... մա՛րշ ձեր տե-
ղերը... Ունտերները պտտվեցին ե դնացին
իրենց տեղերը:

— Աջ դարձ.

— Թրախկ... թխկ... թխկ... թխկ...

Խատիենկոն կատաղությունից այս անդամ
արդեն կապտեց...

— Զեք ուղում... լավ, մինչև առավոտ վո-
տի վրա կչորացնեմ... ձախ դարձ:

Կրկին վոտների նույն աններդաշնակ ձայ-
նը.

— Քուններդ տանում ե... յես ձեզ կքնաց-
նեմ... աջից մեկը յերկու.

— 1, 2, 1, 2· 1, 2:

— Չորս տողան կազմել... մա՛րշ:

Վոտների ձայները իրար խառնվեցին.

— Անշարժ... չշարժվեք... ով սխալվե՞ ե,
մի քայլ առաջ:

Յերեք հոգի դուրս յեկան շարքերից: Նա
կատաղած մոտեցավ մեկին և տեսնելով Մար-
դարյանին, վորը չավատաց փողերը իրան
պահ տալ, վոր հայ ե, վոր գնդի խանութից
թանկադին ծխախոտներ, չոկոլադ ե զնում,
աչքերն արյուն կոխեցին. ճչաց, վալինքներ
շաղ տալով:

— Շոկոլադ... շոկոլադ... շոկոլադ ես
կրծում... դե՛ կեր...

Ասաց ու մի շաչուն ապտակ իջավ Մարդար-
յանի ծնոտին, ապա ձեռքի հակառակ կողմով
մի թարս ապտակ ել մյուս ծնոտին:

— Զհամարձակվե՛ս... ատամների միջից
չսսաց Մարդարյանը, դողաց ամբողջ մար-
մնով, կանգնած տեղը հետ ու առաջ որորվեց,
իրան ուղենալով զապել, մռնչաց զազանի
պես... բայց անկարող եր տաճել վիրավորան-
քը, նա դուրս թռավ շարքից... աչքերը մթե-
ցին, ամեն ինչ մոռացավ, նա տեսնում եր մի-
այն այն ատելի դեմքը: Կայծակի արագու-

Թյամբ հարձակվեց ախոյանի վրա և բռունցքով հասցրեց նրա մռութին, մինչ Խատիենիոն, այդ անսպասելի գրոհից շշմած, չգիտեր, ինչ աներ, մի հարված ել հասցրեց։ Խատիեն-



կոն սթափվելով, ձեռքը տարավ գեղի ատրճանակը, հանեց, բայց Մարգարյանը մի հարված հասցրեց կրծքին և շպրտեց նրան զեպի պատը. Նա հետ-հետ զնաց և գլխով կտավ պատին։ Մարգարյանը մի ձեռքով բռնեց նրա աջ ձեռքը, այնպես սեղմեց, վոր ատրճանակը ակամա-

բնկավ ձեռքից, մյուս ձեռքով բռնեց նրա կոկորդը, և մատները աքցանի պիս սեղմեցին, ուլուռ սկսեց հարվածել գլխին, դեմքին։

Բոլորս, շունչներս մեղ քաշած, մնացել եցինք քարացած։ Ամեն մեկը լսում եր յուր սրտի զարկը, վոր վանդակ ընկած թռչունի պիս թրավրառում եր։

Այնքան անսպասելի և հանկարծակի յեղավայդ, վոր մի բոպե բոլորս քարացել եցինք։ Կարծես, դիմամբ ուշանում եյին ոգնության հառնել Խատիենկոյին, վոր արդեն խրխոռում եր, և թողնում եյին, վոր բոլորի փոխարեն նալուծի վրեժը, քանի վոր այդքան հանդուգն գտնվեց, համարձակ, խիզախ, վոր ձեռք և վերցրել կյանքից ու վոչ դիսցիլինար գումարտակից, վոչ դատից, վոչ մահապատժից, վոչնչից չվախեցավ։

Գնդի հերթապահ սպան այդ աղմուկի վրա, հերթապահ ունտերի հետ վազելով, հասավ այն ժամանակ, յերբ Խատիենկոյի աչքերը դուրս եյին վիճել կոպերից, լեզուն հանած, հեռում եր...

Շարքերը խառնվեցին, վզվոդնի ունտերո-ոՓիցերները վազեցին ազատելու ֆելդֆերելին...

— Զգա՛սա... — գլխի չընկնելով, կանչեց հերթապահ սպան... ո՞ւր և ֆելդֆերելը, ինչո՞ւ մինչև հիմա զինվորներն արթուն են...

Մարգարյանը ուշքի յեկավ, բաց թողեց

ձեռքերը և ապուշ կտրած, մնաց տեղումը
ի անդնած:

Ֆելդֆերել Խատիենկոն հարբածի նման ո-
րորվեց, աչքերը փակվեցին և գլորվեց ցած...

5

Յես ել վաշում մնացի մենակ: Մարդար-
յանին դատեցին զինվորական դատարանով: :
Իշխանավորների վրա ձեռք բարձրացնելու հա-
մար նրան յերեք տարով կարդապահական
վաշտ ուղարկեցին:

Ֆելդֆերել Խատիենկոյին ել մեր դնդիդ
ուրիշ գունդ տեղափոխեցին՝ շարունակելու
յուր սիրագործությունները:

Այս մղձավանջային պատկերները շարան-
շարան անցնում են աչքիս առաջից, և հիշում եմ
յերկու տարի առաջ գրողների Փեղերացիայի
այցը Աղբեղջանի, Վրաստանի և Հայաստանի
կտրժիր բանակայիններին... Յերբ համեմա-
տում եմ անհամեմատելին, զգում եմ, թե ինչ
է արել Հոկտեմբերը:

Ցարի զինվորների մոտ գրողներ, գեղար-
վեստագետներ չեյին գալիս այցի, նրանք չե-
ֆություն չեյին վերցնում, իսկ զինվորներին
յերեմն տանում եյին նրանց մոտ՝ բունտեր
ճնշելու... նրանց տանում եյին զործադունե-
րը սվիններով զսպելու և ցույցեր ցրելու:
«Մուտքն արգելվում է չներին և զինվորնե-
րին»—հաստրակական զրոսավայրերի դռներին

ժամակած եր լինում այդ զազիր հայտարարու-
թյունը: Յեթե իշխանությունն առանց կարմ-
բելու կարող եր որը ցերեկով ամեն տեղ նման
հայտարարություններ անել, ապա այնքան ել
դժվար չե յերեակայել այն վիրավորական
վերաբերմունքը, վոր ունեյին իշխանավորնե-
րը դեպի զինվորը:

Հայհոյանք, ծեծ,—դրանք սովորական
ներ եյին, ցեխի մեջ եր տրորված մարդկային
արժանապատվությունը: Շունը, ձին, շատ
ավելի հարդ ու գին ունեյին, քան ստորին աս-
տիճանավորը: Յարական զինվորը զրկված եր
մարդկային արժանապատվություն, հպարտու-
թյուն, ցանկություններ ունենալու իրավուն-
քից: Նա ստորին տեսակի մարդ եր, մի անկամ,
անզգա չնչավոր եր, վորը ստրկորեն պիտի
հնապանդվեր, հպատակվեր բոլորին, վոր մի
ստիճանով բարձր են իրանից:

Յեթե քիչ թե շատ դիտակից զինվորից
հարցնում եյիր,— ի՞նչ է զինվորը—նա փո-
խանակ անզիր սերտած խոռքերի, կասեր.

— Զինվորը մի այնպիսի անարդ անասուն
է, վորի վրա ամեն մի սրիկա հեծնում է:

Անարգված, ստորացած զինվորությունը
թույն եր կուտակում կրծքի տակ, վոր մի որ
պիտի պայթեր: Յեվ նա պայթեց այնքան ա-
չեղ, վոր նրա ուժից հիմնահատակ կործանվե-
ցին հին կարգերը, և բացվեց Հոկտեմբերի ար-
շալույսը:

ՀԱՐՑՈՒՐ ԾԻՊՈՍ

Սովորություն ե և շատ բնական, վոր
Հները հնից կպատմեն, նորերն ել, հինը լսե-
լով, կզարմանան, կժաման կամ կսարսա-
ֆեն:

Դե լսեցեք եսոր ձեզ մի բան եմ պատմե-
լու, աչքովս տեսած:

Դուք ել, յերբ տարիք առնեք, ձեր զավակ-
ներին ու թոռներին եք պատմելու հնից:

Ինչպես հիմա դուք՝ նրանք ել ձեզ են լսե-
լու բերանները բաց:

Պատմողից պատմող, կյանքն իր ճամբով
առաջ կգնա:

1898 թվին վիճակ քաշեցի ու գինվոր ըն-
կա: Մայրս ու քույրերս, մորաքույր, հորա-
քույր, հեռու ու մոտիկ, լաց ու շիվանով ճամ-
բա դրին:

Զինվոր դնալն են ժամանակ մեռնելու պես,
մի բան եր: Գնացողը, կարծես, ել յետ չեք
գալու:

Հսել եյի, վոր ուրիշ շատ գեղեր ու քաղաք-
ներ կան, բայց մեր գեղից գենը բան չեյի տե-
սել:

Մի քանի հարևան դյուզի նորակոչիկնե-
րիս հավաքնցին, լցրին Փուրպոնը և քշեցին:
Նախիջևան անցանք, հասանք Յերևան, ենտե-
ղից թիֆլոս ու յերկաթուղով բաթում տա-
րան:

Բերանս բաց, աչքերս չուած, նայում եյի
ու չեյի հավատում աչքով տեսածիս: Մեր գե-
ղից մինչեւ բաթում բաներ տեսա, վոր յերա-
գում ել չեյի տեսնի:

— Ո՞ւր են տանում մեզ:

Յերեանում ասացին, վոր Ստավրոսով են
նշանակել մեզ: Բայց թե աշխարհի վոր ծերին
եղ Ստավրոպոլը՝ չգիտեյի:

Ծով չեյի տեսել. եղ ել տեսա:

Լցրին նավի մեջ ու յերեք թե չորս որ ջրի
վրա գնացինք, գնացինք Նովորոսիյսկ հա-
սանք, ենտեղից եղ յերկաթուղով Ստավրոսով
տարան:

Մեր գեղից յերեք ընկերներ եյինք: Շատ
ինդրեցինք, վոր մեղ մի տեղ դցեն, բայց բան
դուրս չեկավ:

Մեկի բոյը շատ բարձր եր, նշանակեցին
առաջին վաշտը:

Մնացինք Վարդանն ու յես. լավ եր, վոր
մեղ ել չըաժանեցին, թե չե սիրտներս լափ
կճաքեր:

Լեզու չգիտենք, խոսք չենք հասկանում,
առանց լեզվի յա մենք, յա մի անբան անտ-
առուն մեկ եր:

Լած կլինեք, կամ թե կարդացած, վոր մի
ժամանակ աշակերտներին ծեծելով եյին ու-
ղում մարդ չինել, իսկ զինվորին ծեծելով զին-
վոր:

Են ժամանակ հիմիկվա պես չեր:

Մի տարվա զինվորը մեծ եր: Գլխիդ բամ-
փում եր, ձեն ծպտուն չհանես, քեզնից հին
ե, ել ուր մնաց յեփրեյտոր, ունաեր, իսկ Փելդ-
ֆերելը — դե նա կազարմայի «թագավորն» եր:
Վոնց վոր մի կատաղած գել, հեռվից վոր նը-
րան տեսնում եյինք, դողներս բռնում եր:

Սպաների համար չխոսենք, նրանց համար
յա մի քոսոտ չուն, յա մենք, մեկ եյինք. Հլա-
շունը շատ ալելի հարդ ու գին ուներ:

Թագումն, վոր մարդ չտեսնի, Վարդանն ու
յես աղատ ժամերին դնում եյինք հեռու մի
անկյուն, նստում եյինք, գեղից խոսում, դարդ
դարդի տալիս ու լաց լինում, եղակս որը մըթ-
նեցնում:

— Յերեք տարի ութ ամիս, հեյ, հայ...:
Յերբ պիտի անցնի: Ամեն մի որը տարի յեր
թվում, ու ել հույս չունեյինք, թե մի որ
պրծնելու յենք:

Գիշերներն եր մեր միիթարությունը, են
ել չեյին թողնում մի հալալ քնինք: Դեռ լույ-
սը չբացված վեր եյին կացնում:

Դե շուտ, շուտ կոշիկդ մաքրիր, լվացվիր,
զնա շարքում կանգնիր, զան մտիկ տան, թէ
ինչդ ե պակաս:

Կոշիկդ լավ չի փայլում: Շրա՛խկ, հասց-
նում ե թշիդ, գոտիկի պղնձի չափուաստը լավ
չի փայլում. հերթից դուրս գիշերապահ, մա-
զերը բռնվեց, ու աշխատանք և այլն և
այլն:

Ծեծում, հայհոյում ե, ով հասնում ե,
յերբ հասնում ե, վորտեղ/հասնում:

Ճաշից առաջ շարեշար կանգնեցնում ու
այնուևս նյին ճաշի տանում:

Մեկ մեկ ֆելդֆերելի տրամադրությունը
լավ չեր լինում կամ մի քիչ խմած, դուրս եր
զալիս իր սենյակից և ծեծին որինական բը-
նույթ տալու համար հրամայում եր.

— Գդալներն առաջ:

Բոլորը դեմ եյին անում փայտի գդալնե-
րը. առաջին մի յերկուսի գդալները նայում
եր, իհարկե, կեղտոտ եր գտնում և ապտակ
հասցնում, իսկ հետո ել չեր նայում, այլ մի-
միայն ապտակում եր գործի շտագող մարդու
նման:

— Զախկ, չրուխկ...

Տեղում եյին ապտակները համաշափ, այն-
պիսի արագությամբ, վոր, կարծես, վախենում
եր մինչև մյուս ծայր հասնելը՝ սառչի առա-
ջին յերեսը: Կրթության գործը վերջացնելով,
անվրդով հրամայում եր— դեպ ձտի, քայլով

մարչ: Մենք գնում եյինք ճաշի, ինքն ել հը-
պարտ, կրունկներով հատակին խփելով, գը-
նում եր իր սենյակը ճաշելու:

Ո՞մ բողոքես, ինչպես բողոքես, քանի
վոր գիտես, վոր ում դեմ բողոքում ես, հենց
նրա միջոցով պետք ե բողոքը տեղ հասցնես:
Բողոքից բան չի դուրս գա, իսկ քեզ գերեզմա-
նի դուռը կհասցնեն:

Վախենում եյինք բողոքի մասին մտածել
անդամ: Ծեծը դարձավ սովորական բան, ել
չեյինք վիրավորվում, միայն ուրախանում ե-
յինք, վոր ենքան ել չցավեց: Ճարն ի՞նչ, ընկել
ենք, պիտի քաշենք: Մի ձեռք, վոր չես կարող
կտրել, համբուրիր ճակատիդ դիր:

Չեռքով կամ վոտով խփելը, քիթ ու պը-
ռունդ արնվա անելն անորեն բան եյին, բայց
ծեծում եյին, վորովհետև բողոքող չկար:

Բայց կար մի սրբագործված ծեծ, ծեծ,
վոր որենքը թույլ եր տալիս: Ծեծ ձիպոտնե-
րով, ահա ինչից եյինք սարսափում:

Ճիպոտներով ամեն մեկին ծեծել չեր կա-
րելի. պետք եր մի վորեե հանցանքի համար
դատվել, և յերբ դատարանը վճռեց մեկին գը-
ցել տուգանվածների դասի մեջ, այն ժամանակ,
վաշտի հրամատարից սկսած, բոլոր հրամա-
տարները կարող եյին ծեծել տալ, 25-ից մին-
չե 400 ճիպոտի հարված հասցնելով:

Այդ բանից այնպես եյինք սարսափում,
վոր մյուս բոլոր պատիժները, չարչարանքնե-

ըլ, ծեծը վոչինչ բաներ եյին թվում: Դժվար չեր ընկնել այդ դասը, և այն ժամանակ վայը եկել: Քեզ տարել ե:

Կոճակդ պոկված ե— 25 ճիպոտ.

Մազերդ յերկար են, յեղունդներդ կեղտոտ, հրացանդ մաքուր չե, ամեն մի վոչինչ բանի համար կարող են պառկեցնել և ճիպոտներով մարմինդ ծվատել:

Զինվորը մարդ չե, ո՞վ ե նրան մարդու տեղ դնում: Իսկ ով լեզու չէիտե, հո լափ անառւն ե:

Ամեն որվա մեր ճաշը հոտած կաղամբի բորշ եր ու սեվ գրեչիխայի վլավ գրեթե առանց յուղի, քուսպ դարձած:

Բոլորը, սկսած վաշտի հրամատարից մինչեւ խոհարարը՝ գողանում եյին:

Մի բարձրաստիճան սպա, իմանալով, վոր զինվորներին վատ են կերակրում, և վորպեսզի զինվորներին հասկացնի, վոր գանձարանը չե մեղավորը, մի ձյունի գունդ ե վերցնում և տալիս առաջին շարքում կանգնած առաջին զինվորին, հրամայելով, վոր ձեռքից ձեռք անցկացնեն մինչեւ տողանի վերջին զինվորը: Իսկ վերջինի ձեռքից առնում ե փոքրացած ձնագունդը, ցույց տալով, առում ե— ահա այսպես ե և ձեր ճաշը. ամեն մեկի ձեռքում մի քիչ հալվում ե և վերջը սա յե մնում. թե չե գանձարանը տալիս ե այնքան, վոր գոհ կմնաք ե կուշտ կլինեք:

Այդ բացատրությունը չատ սրամիտ եր ելավ, բայց մեր փորը դրանից չկշտացավ: Յես ու ընկերս տնից ստացած փողով հաց, ուրիշ բանման եյինք առնում, թե չե նրանց տվածով քաղցած կկոտորվէյինք, սկի ուտելու բան չեր:

Որը տարի յեր թվում, բայց ելի անցնում եր, մեկ ել տեսանք գարուն ե սկսվում:

Մի քանի որում սառույց, ձյուն, հաղվեց, ծառերի մեջ ջուր ընկավ, բնությունը զարթնում եր քնից:

Սկսեցին ճամբար գնալու պատրաստություն տեսնել:

Ամեն որ տանում եյին աշխատանքի: Վը-րանների համար բներն եյինք նորողում, ճանապարհներն եյինք հարթում...

Մայիսի մեկին ճամբար տարան:

Վրանները խփեցինք ու եղ որը զինավարժություն, բան չեղավ ճամբարն եյինք կարգի բերում:

Ճամբարում յես ինձ ավելի լավ եյի ըդ-գում: Լեզուները սկսել եյի հասկանակ: Ազատ ժամբերին ել յես ու ընկերու՝ վարդանը մի խոլ-վաթ տեղ եյինք գտնում ու պառկում կանաչ խոտերի վրա:

Սովորեցինք մեծավորներին ինչպես դուր պալ: Ծխախոտով, կալրասով, սպիտակ հացով, ողիով, մեկ-մեկ ել փող, իբր թե պարտք, տալով, վորովհետեւ մեկ ե վերադարձնող

չեր լինելու, տալիս ու եղակես դլուխ եյինք պահում:

Կաշառքը շատ բան եր անում:

Բայց վայ թե սովորեցրիր ու ծերը կըտրեցիր, ել պրծար, բանդ բուրդ է: Թե մի անդամ տվիր՝ միշտ ել պետք ե տաս, թե չե ձորից ջուր կրելով, գիշերները խոհանոցում կարտոֆիլ մաքրելով, ճամբարն ավլելով, անքուն պահելով, հողիդ կհանեն:

Շատ եյին վախեցրել:

Շատ եյինք լսել, վոր տուգանվածներին ճիպոտներով ծեծում են, լսել եյինք, բայց աչքով չեյինք տեսել ու կարծում եյինք հենց ենպես, վախեցնելու համար են անում: Բայց մի որ համոզվեցինք, թե դա հեքիաթ չե, այլ իրականություն և շատ վատ, անխիղճ, դժան իրականություն:

Մի քանի որ ե խոսում եյին, թե մեկին գողության համար պետք է ծեծեն, հարյուր ճիպոտ պետք է հասցնեն:—Իսկ յեթե հանկարծ ինձ ստիպեն խփել... Դրանից ավելի վախեցա, քան յեթե ասեյին, վոր ինձ են ծեծելու:

Բայց ընկերս լսել եր և ինձ հանդոսացըրեց, վոր խփողներն ել պետք ե տուգանվածների դասին պատկանեն, վոր բան ե, յեթե խղճան, կամաց խփեն, կարողանան իրենց եւ պառկեցնել և 25 ճիպոտ տալ:

Յես աշխատում եյի չմտածել, ինքո ինձ համոզել, վոր դատարկ բան է, ծեծ ե ելի, քիչ են ծեծում, զա յել ծեծե է, քիչ կցավի ու կանցնի, հո չեն մորթելու: Քիչ մարդ են կախում, գնդակահարում, բանտերում փթեցնում, ծեծն ի՞նչ ե վոր, — մխիթարում եյի ինձ, — մի բան, վոր յես չեմ տեսնելու: մի անծանոթ մարդու պետք ե ծեծեն, եհ, թող ծեծեն, ի՞նձ ինչ:

Զինավարժությունները նոր եյինք վերջացրել, յեկել և պետք ե ցրվեյինք, մեկ եւ հրաման յեկավ, վոր բոլոր վաշտերը հրացանները թողնեն և տանեն ճամբարի յետեկի մեծ հրապարակը:

— Ել ո՞ւր են տանում, — մտածեցի յես, — յերեկի ելի սե աշխատանքի:

Տարան ու շրջանակաձեւ կանգնեցրին. մի մեծ շրջան ստացվեց: Բերին մի սեղան դրին, կանաչ մահուգով ծածկված, ավետարան, խաչ, տերտերն սկսեց զգեստավորվել:

Սպանները լուրջ մտախոհ դեմքով, կամացուկ խոսում եյին իրար հետ: Ինչ վոր մի հանդիսավոր բան եր պատրաստվում:

Նորակոչիկներին հրամայեցին կանգնեցնել առաջին շարքերում:

Դեռ գլխի չեյի ընկնում, թե բանն ինչումն է: Մեկ ել մի զինվոր սպայի առաջնորդությամբ յերկու հրացանավոր պահակների հետ շրջանը մտան:

Ֆելդֆերիները, վորոնք իմբրված եյին.

թմբկահարների մոտ, իրար անցան. ամեն
ժեկը դնաց իր վաշտի մոտ:

Մեր վաշտի հրամատարն առաջ անցավ
դեպի կենտրոնը. մի քանի խոսք ասաց, վորից
մի բան հասկացա, վոր 100 ճիպոտ պետք և
տան գողության համար:

Եղ բոպեյին, թե հիշեր իր գողություննե-
րը, բա իրան քա՞նի հարված պետք է հասներ:
Յերկու դինվոր մի-մի խուրձ ճիպոտներ
բերին և դրին սեղանի մոտ:

Կալանավորը կանգնած եր գունատ, շինելն
ուսերին գցած և նայում եր ուղիղ մի կետի
անթարթ:

—Աղոթքի համար, գլխարկները հանել, —
թմբկահարներն աղոթքի թմբկահարեցին, քա-
հանան ինչ-վոր աղոթք կարդաց... Մի՞թե
ծեծի համար ել աղոթք կա սուրբ գրքում...

Թմբուկների ձայնը մի վայրկյան լոեց:
— Գլխարկները ծածկել:

Թմբուկների գղրդյունի տակ ծածկեցինք
գլխարկներս. առաջ յեկան յերկու զինվոր,
նրանք գունատ ելին մեռելի պես, դողալով
կոացան, վերցրին ճիպոտները և կապը քան-
դեցին, աչքները միշտ զետնին հառած:

Ակամա նրանք պետք է ծեծեն իրանց ըն-
կերոջը, ո՞վ գիտե, գուցե մի քանի որ հետո,
իրան ել կծեծի մի ուրիշը, կամ հենց սա, վո-
րին պիտի ծեծեն:
Բոլորս լուռ, սրտատրով սպասում ենք,

չենք ուզում հավատալ, սպասում ենք, վոր
այս բոլորից հետո կներեն և կցըլեն, վոր այս
բոլորն ահարեկելու համար եր:

— Սկսել...

Մեր վաշտի ֆելդֆերելն առաջ անցավ.
յերկու պահակները կալանավորին շրջանի մեջ
տեղը հասցըին և յետ դնացին:

— Պառկիր:

Դատապարտվածը վերցնում է ուսից վե-
րաբերուն, փոռմ է զետնին, դողդողացող ձեռ-
ներով բաց և անում շալվարի կոճակները,
ֆելդֆերելն ոգնում է իջեցնել մինչև ծնկները,
և յերեսի վրա փոքում է:

Թմբկահարները թմբկահարում են և
թմբուկների վերջին զարկի վրա լսվում է հրա-
մանը.

— Սկսել:

Գլխավերեւ կանգնած է մեր ֆելդֆերերը,
յերկու կողմից մի-մի զինվոր բարակ, ճկուն,
կարմրավուն ճիպոտները ձեռներին:

Հրամանին անմիջապես հետեւում է.

— Մեկ...

Արագ իրար հետեւից իջնում են հարված-
ները: Տեսդային արագությամբ խփում են,
նետում են, ուրիշն առնում.

— 2 ... 3 : ... 4 ... 5 ...

Ճկուն ճիպոտները՝ ճեղքում են ողը, իջ-
նում՝ տժժալով:

Առաջին հարվածներից փափուկ մսերը

գողում են, ցնցվում, ինչպես յեռացող ջուրը
կաթսայի մեջ:

— 6 ... 7 ... 8 ... 9 ...

Հարցածներն իջնում են, կարմիր դոլեր
թողնում մարմնի վրա:

— 10 ... 15 ... 20 ...

Արյունի մի բարակ հոսանք դուրս է ցայ-
տել վանդակից և շատրվանի պես վեր և թըռչ-
ում:

— 21 ... 22 ... 25 ... 30 ... 40 ... 45 ...

Կալանավորը լոեց, չի լսվում զուսպ վոռ-
նոցը, չի շարժվում:


Բժիշկը մոտենում է, ուշաթափ է, զրջում
են կողքի վրա, նաշագիր են տալիս քթին, քուն-
քերը տրորում, բանում է աչքերը, կրկին ու-
շաթափվում ...

Բժիշկն աշխատում է ուշքի բերել:

Հանկարծ լսվում է հուսահատ, մի ահռելի
ճիչ, և ուշքի յե գալիս:

— Շարունակել:

Շարքերում զուսպ, վոռնոցի նման ձայներ
են լավում, գլուխների ծովը տարուերքում է,
հուզվում, շատերի աչքերից արցունքներ են
թափվում: Իմ աչքերս սեանում եյին, թվում
եր, թե ահա պիտի ընկնեմ, արնացնելու չափ
ուժով կծում եյի շրթունքս, վոր չճշամ, ար-
ցունքները լուս թափվում են աչքերիցս, վո-
չինչ չեմտեսնում, բայց լսում եմ հարգածների



ձայն, վորոնք՝ պատռելով ողը, դիմչում են
մերկ մարմնին:

Սրբում եմ աչքերս:

Ակոսված մսերից արյուն ե ցայտում,
մսերը կապտել են, արյունը սևացել է թանա-
քի պես:

—66... 68...

Կրկին ուշաթափություն:

Բժիշկը կրկին ուշքի յե բերում:

— 70... 71... 75...

Այս անգամ բժիշկին չի հաջողվում նրան
ուշքի բերել:

Լուռ ե, վոչ մի ձայն, շարքերը քարացել
են, ամեն մեկը լսում ե իր սրտի զարկը:

Պատիժ ավող զինվորները ծանր աշխա-
տանքից կարմրած, հուղված, ճակատների
քրտինքն են սրբում:

Դեռ 25 ճիպոտ մնում ե:

Բժշկի պատվերով պատգարակի վրա յեն
դնում ուշաթափ, վիրափոր զինվորին, մինչեւ
ուշքի չլա ծեծել չի կարելի: Տարան հիվան-
դանոց լավացնեն, վոր մնացած 25 ճիպոտները
իզուր չանցնեն. դատարանի վորոշումը պետք
է իրագործել, ներում չկա:

Յես պատմեցի ձեզ, վոր տեսնեք, թե ինչ
որեր ենք տեսել:

Վոր համեմատենք եսորվա կարմիր զինվո-

րին, ցարի ստրուկ զինվորի հետ: Վոր յերանի
տաք այն որին, յերբ թագավորն իր մեծատուն
դահիճներով գետնի տակն անցավ:

Մեր ապրած որը սա յեր:

1898 թվից հետո շատ բաներ եմ տեսել:
շատ բան ե փոխվել աշխարհում, համա հիմա
ել կաշիս սարսրում ե, մազերս բիզ-բիզ են լի-
նում, յերբ միտս ե գալիս մեր քաշածը:

ԽՐՏՎԻԼԱԿԸ

Սա փոքրիկ եր, կուրծքը նեղ, հիվանդուս,
տեղքը մի փոքր կոացած, արևակեզ դեմքը նի-
հար եր, յերկայն քիթը ծոված դեպի բերանը,
կղակը դուրս ցցված, շրթունքները բարակ,
կապված, աչքերն այնքան փոքր եյին, վոր
քիչ հեռվից սել գծեր եյին յերեսում. գլխին
ու մորթե դլամրկը, վորն այդ ծամածոված
դեմքին բոլորովին չեր սաղում: Հագած եր
պատառոտած բաճկոն, վոտներին լայն-լայն,
յերկար ճտքերով կոշիկներ:

— Խրտվիլակ:

Հենց առաջին որվանից այդ մականունը
տվին նրան: Նա ընդհանուր հետաքրքրության
առարկա դարձավ:

— Ինչպե՞ս ե անունդ, վորտեղի՞ց ես-
հարցնում եյին ամեն կողմից:

— Ասա՝ «я чу че ло», -սովորեցնում եյին
շրջապատողները:

Նա ապուշ, բերանը կիսաբաց, բոլորին
թութակի նման կրկնում եր՝ «я чу че ло»:

Վոչ ծեծ, վոչ պատիժ նրան զինվոր չըդարձ-
րին. բոլորը համոզվեցին, նրանից բան չի

դուրս գա: Նբան նայելիս, մարդ ակամա ծիծառ
ղում եր:

Նրա վոքրիկ տչքերում հաճախ արցունք-
ներ եյին յերեռում, վորոնք վոչ պակաս ծիծաղ
եյին հարուցանում:

Վոչ վոքրի հետ չեր խոսում. լուռ կառա-
րում եր՝ ինչ Հրամայում եյին: Համարյա
մեն որ ավելում եր զորանոցի սենյակները,
ոգնում խոհանոցում:

Վորքա՞ն եր նա տանջվել ջրի ծանր դույլի
տակ:

Պարապմունքների ժամանակ աշխատում
եր խոհանոցում, իսկ Հանգստության ժամերին
նա զվարճացնում եր ընկերներին: Յեվ հան-
կարծ...

Նա չկար:

Ամեն տեղ փնտրել եյին, բայց վոչ մի տեղ
նրան չեյին գտել:

Բոլորը համոզված եյին, վոր նա փախել է:

Ժամը 9-ից անց եր, յերբ մի զինվոր նրա
թերից բռնած՝ ներս մտավ զորանոցը:

— Ուռուա՞ն, ուռուա՞ն, չուչեղոն, չուչելոն...
գոռալով բոլորը դուրս թափվեցին անկողին-
ներից նրան նայելու: Նա ամրող մարմնով դո-
ղում եր:

— Վորտե՞ղ եր, ինչո՞ւ է թրջված, —
հարցնում եյին ամեն կողմից:

Բոլորը ուշադրությամբ նայում եյին նը-
րան:

— Ի՞նչ եք կարծում, վորտե՞ղ եր. չներին
փակում եյի. տեսնում եմ՝ չները գնում են և
վախեցած, մոմուլով յետ-յետ գալիս: Զար-
մացա, ինչ պետք է լինի, ներս մտա, լուցկի
վառեցի, տեսնեմ մեկը փռված է գետնին.
մոտ գնացի, — չուչելոն:

— Հա՞՛, Հա՞՛, Հա՞՛, Հա՞՛:



— Հարցնում եմ, «ինչո՞ւ ես այդտեղ
պառկել», վոչինչ չի պատասխանում:

— Այ սարսաղ, ինչո՞ւ եյիր այն ցրտումը
պառկել:

— Հայրենիքի պաշտպա՞ն... — Հեղնելով
ասաց մեկը:

— Յերեվի ուղում ե հիվանդանալ, վոր
տուն թողնեն, չե, եստեղ ել կսատկես:

— Հանդիստ թողեք դրան, թողեք՝ շորե-
ր փոխի. տեսնում եք՝ լաց ե լինում, — ա-
սաց յենթասպան, մի գեր, կարմիր դեմքով
տղա:

— Ի՞նչ լաց, ծիծաղում ե, տեսեք՝ ինչ-
պես կհռհռա, ասաց մեկը՝ մատով խվելով
նրա յերկայն քթին:

— Պառկեցեք, — հրամայեց յենթասպան, —
իսկ դու Գալուստով, հայրենակցիոն շորերը
փոխիր:

Բոլորը պառկեցին, բայց ծիծաղը չդա-
ղարեց, մինչև յենթասպան չկրկնեց հրամա-
նը՝ լունէ:

Կամաց-կամաց ամեն ինչ հանդարտեց, —
քիչ հետո բոլորը քնած եյին:

— Կարո, Կարո, քնած ես:

— Հը, ի՞նչ ե, այ տղա, ինչո՞ւ չես քը-
նում, քնաթաթախ մրմնջաց նրա կողքին պառ-
կած զինվորը, վոր նրա համադյուղացին եր:

— Քունս չի տանում, մայրս, յեղբայրս,
քույրերս աչքիս առաջին գալիս, գնում են,
տեսնես հիմա ի՞նչ են անում, յարաբ մեկ ել
կարժանանա՞նք:

— Քնիր, քնիր, աստուծով կպրձնենք —
կերթանք, հո չեն մորթելու. սկիզբն ե, տը-
լեր ե թվում, մի քիչ անցնի, կոովորենք,
խուր

լեզուները կհասկանանք, քնիր, իմ քունս ել
տանում ե:

— Զե, խելքս բան չի կտրում. ախր ին-
չո՞ւ յեն բերել մեղ այստեղ: Մեկ-մեկ սիրտս
ասում ե. «Վերցցրու գանակը, իրիր ջիպյարդ
և վերջ տուր», բայց ելի մտածում եմ — ասո-
ված վողործած ե, բաշքի մեկ ել տեսնեմ մեր
գյուղը... կարո, ես գիշերն ել վոր չինի,
ինչ կանենք... կարո, կարո... քնեցիր...
ոտո՛խ:

Արդեն մի քանի որ եր, վոր նա հիվան-
դանոցում պառկած եր, ժամը գիշերվա յերե-
քըն եր, լամպերը աղոտ լուսավորում եյին,
բոլորը քնած եյին:

Մահճակալներից մեկի մոտ մի զինվոր
նստած ննջում եր:

Մահճակալի վրա, շապիկով, կուրծքու
բաց պառկած եր նա. աչքերը վակ եյին,
բայց նա քնած չեր.

— Մայրիկ... ջո՞ւր... աաք ե... մնա՞ք
բարով... մի լար... կզամ, հո չե՞ն մորթե-
լու...

Կուրծքն արագ ցածրանում — բարձրանում
եր. սառը քրտինքը ծածկել եր ձակառը:

— Տվեք շորերս... գնում եմ:

Նա նստեց մահճակալի վրա, սկսեց հա-
զալ, հազը շարունակվեց մի քանի վայրկյան,
նա թուղացած յետ ընկալ խոտե չոր բարձի
վրա:

ինչու չի դալիս... ուր ե, բժիշկն ասաց
տուն ես գնալու... կարո, գըիր... մայ-
րիկ... գըիր... ես... լավ...

Նա լոեց: Յերբեմն կցկտուր խոսքեր
դուրս ելին թռչում նրա բերանից:
— Դուռը բա՛ց, տա՛ք ե... մայրիկ...
չունչս... ո՞հ... ո՞... ես ել չեմ տեսնելու.
վերջացավ...

Նա սկսեց հեկեկալ. դեմքը չփոխվեց, վոչ
Մի կաթիլ արցունք դուրս չեկավ նրա փոքրիկ
աչքերից:

— Հա, հա, հա, հա... հանկարծ ջղա-
ձրզորեն հռչուց նա... յա պատու, պատու...
մարիկ... մար... իկ...:

Մի քանի ցնցումներ, և նա մնաց ան-
շորժ...

Բոլորը քնած ելին, վոչ վոք չտեսած նրա
մահը:

ԲԵՌՆԱԿԻՐ ԵՇԵՐԻ ՏՐԱՆՍՈՐՏԸ

Աա չեր հասկանում, թե ի՞նչ ե կատարվում իր շուրջը, այդ ի՞նչ տագնապ ե, վորտիրել ե մարդկանց:

Նա աղօտ կերպով հիշում եր, վոր մի որ իր տերը, վորին նա շատ եր սիրում, հեզ, քաղցր բնավորության համար, յեկալ իր մոտ, ձեռքով շոյեց գլուխը, մեջքը, ինչ վոր ասաց ու գնաց:

Մի տարի անց մյուս տերն ել զնաց ու ել յետ չեկավ:

Յերկու մեծ յեղբայրների գնալուց հետո, Հարութիկը դարձավ նրա տերը, նա հանգիս չուներ: Ամբողջ որր աշխատում եր, իսկ աշխատանքից հետո Հարութիկն եր հեծնում ու չու հա, չու... վաղեցնում, և յերբ մի քիչ դանդաղեցնում եր վազքը, բզով ծակում եր վեզը, պոչի մոտի նուրբ տեղերը, իսկ նա սարսափելի չեր սիրում այս բանը:

Հարութիկի մեծ յեղբայրներն իր հետ այնպես չեյին վարվում. վոչ գլխին եյին խըմակում, վոչ ականջից քաշում, վոչ ել պոչը ձգում, իսկ աղատ ժամերին կանգնած չարդախի տակ, խոտը առաջն տծած, ուտում եր,

ինչքան քեփը կտար։ Պառկում եր մեջքի վրա, հողերի մեջ թափալ տալիս, վեր կենում, թափահարում իրեն... իսկ ինչպես եր սիրում նա այդ բանը։ Յերբեմն նույնիսկ փալանով, բեռը մեջքին անդիմադրելի պահանջ եր ըդգում թափալ տալու, բայց ճիպոտի վախից զազում եր իրեն և առաջ գնում։

Ավելորդ ե խոսել այն մասին, թե ի՞նչ կենդանի յե նա, համառ ե, թե հեզ, խելոք, թե հիմար... եշ ե ելի, ամենասովորական էշ։ Փայտ, խոտ եր կրում սրա—նրա համար, ջրաղաց ցորեն եր տանում աղալու, մի խոսով՝ ինչ պատահում եր։ Գլուխը կախ, անտրտունջ իր գործին եր։

Նա ել այդ տան աշխատողներից մեկն եր։ Աշխատանքը շատ ծանր եր, բայց նրա մտքովն ել չեր անցնում, վոր մի որ կարող ե վորիվել. սուս ու փուս իր գործին եր։

Վատ որ լուսացավ Հարութիկի համար։

Յեկան ինչ վոր անձանոթ մարդիկ, ինչ վոր ասացին Հարութիկի մորը, գուգոտացին, թե «խի՞ չեք բազարի հրապարակը բերել», — իրենք, իրենց ձեռքով թոկից բռնած քարշ տալով իշտկին, բերին կանգնեցրին բակի մեջ տեղում։

Հարութիկը լավ չեր հասկանում բանի եյությունը, բայց վոր հասկացավ, բարձրաձայն սկսեց լալ։ Իսկ մայրը կամացուկ, մեղմ

ձայնով ինչ վոր ասում եր անձանոթ մարդկանց։

Եշ լսում եր նրանց բոլոր ասածները, բայց բան չեր հասկանում. ինչո՞ւ յե Հարութիկը լալիս, ինչո՞ւ Հարութիկի մայրը այն պես խեղճացած, տխուր ձայնով ե խոսում, այնպիսի մելամաղձոտ հնչյուններ զսեց նրա ձայնի մեջ, վոր ակամա տխրեց, սիրտը մըղիւրաց։

Նա գուշակում եր, վոր մի չար բան և նյութվում, բայց ում դեմ՝ չկարողացավ իմանալ։

Գլուխը մի քիչ բարձրացրեց ու տեսավ, վոր Հարութիկի մայրը ձեռները ծոցում լավով, իրան ե նայում։ Նա նորից գլուխը կախնց և սպասում եր, թե ի՞նչով ե վերջանաւու այս ամենը և բոլորովին չեր սպասում, վոր վերջանա նրանով, ինչով վերջացավ։

Առանց նրան հարցնելու քարշ տվին վզի կապած թոկը։ Նա յետ-յետ զնաց, հենվեց յետի յերկու վոտների վրա, չոեց, վոր ավելի ամուր մնա կանդնած, վճռելով տեղից չշարժմել։

Համառությունը բռնեց։

Բայց վզից կապած թոկը սեղմում, ցագացնում եր վիզը։ Նա թափահարեց գլուխը, աշխատեց ազատվել, բայց իզուր։ Վզի թոկը ձղվել եր լարի պես, վիզը յերկարել, բայց դեռ դիմադրում եր։

Հարութիկը պինդ-պինդ գրկել եր նրան
ու զալով ճչում եր:

— Զեմ տա... չեմ թողնի...
— Բա եսպես բան կլինի՞ : Աչքներդ
մենակ իմը տեսավ:

— Բոլորինը, բոլորինը հավաքում
ենք:

— Այս նրանցը շատ ե, իմը եղ մի
հատն ե:

— Մենք ի՞նչ անենք, քույրիկ, հրա-
ման ե, թագավորի հրաման:

— Դե, եղ թագավորին առացեք, վոր
գա մեր ձեռքիցը բռնի, տանի ջուրն ածի, ել
ի՞նչի համար ե պահում, ի՞նչ հողը տամ
գլխիս, ես անտեր մնացած վորքին ի՞նչով
պահեմ... Չուխտ տղաներիս տարան, նրան-
ցից հետո դա յե մեզ հաց տվողը, յես վո՞ր
ջուրն ընկնեմ:

— Զրի հո չե՞ն տանում:

— Զեմ ուզում նրանց փողը:

— Դիմում տուր, քույրիկ:

— Ո՞վ գիտի, բժիշկը բաւքի բրակ
դուրս բերի, են վախտը յետ կտան:— Միւ-
թարեց անծանոթներից մեկը:

— Ես կոիվ հնարողի տունը քանդվի,
իմ տունը քանդողի բալեքը մեռնեն, տես-
նեմ... Հարո ջան, Խաչո ջան, անուններիդ
մատաղ, բալեքս, վո՞րտեղ եք յարաբ, վո՞ր

շոլում, ի՞նչ հալի յեք, ջաններիդ դուրբան,
վոտներիդ տակին սատկեմ...

Մինչ այդ զապված արցունքները հեղեղի
պես թափկեցին նրա աչքերից, ել չեր ամա-
չում ոտար մարդկանցից, սրտի մռմռուը
անեծքներով թափում եր կոիվ հնարողների
դլնին:

— Աղա, դու ի՞նչի յես մլորվել, քաշ
տուր:

— Զեմ թողնի, չեմ թողնի:
— Դե, ուադ յեղիր, հարամզադա:

Եշը թափահարեց գլուխը, յերկար լայն
ականջները շարժվեցին, գլուխը կպցը Հա-
րութիկի կրծքին ու մնաց այդ դրության
մեջ, չհասկանալով նրանց լալու պատճառը:
Թեև չհասկացավ, բայց մի այնպիսի թախիծ
տիրեց հոգուն, վոր ինքն ել պատրաստ եր
մարդու նման լալ, քթի մեջ այնպիսի մի
խտխոտց զգաց, ինչպես լինում եր, յերբ քե-
թը ճանճ կամ մոծակ եր մտնում: Փոռացրեց,
սրսկելով քթի ջուրը և թուքը Հարութիկի
ձեռքերին ու շորերի վրա:

Մի ըոպե նա զգաց, վոր թոկն ել չի ուղ-
մում վիզը, և նա ամուր կանգնած ե չորս վոտ-
ների վրա, մտածելով, վոր ամեն բան հաջող
վերջացավ, և ինքն ազատ ե, կարող ե զնալ,
մանավանդ հիշեց, վոր առաջն ածած խոտը
դեռ չեր վերջացրել, գլուխն արագ լրջեց,

վոր գնա, բայց խսկույն զգաց, վոր թոկը
կրկին ձգվեց:

— Թոշ... թոշ... հարամզադի եշ...

Նա կամքին հակառակ կանգ առավ, զգա-
լով, վոր պարանը պինդ սղմում է վորի կտշին,
կրկին լարեց բոլոր ուժերը, յետ-յետ գնաց,
խսկ յերբ մեջքի վրա զգաց ճիպոտի դաշող
հարվածը, առանց յերկար մտածելու բարձ-
րացրեց յետեի յերկու վոտները և, հենվելով
առաջի վոտների վրա, ամրող ուժով հար-
վածեց:

Յեթե յետեր կանդնած մարդը մի քիչ
ուշանար, հարվածն անշուշտ քիթ ու մոթին
կհասներ, և խոսք եմ տալիս, վոր հետեանքնե-
րը բավականին ծանրակշիռ կլինելին:

— Քոփակ ողջու եշ... յես քու եսենց ու
ենենցը... քացի յես տալիս... Հա՞... ասաց
ու սկսեց ձեռքի ճիպոտով անխնա հարվածել
եշի գլխին, փորին, մեջքին, մոթին, ուր
հասնում եր:

Եշը կանգնած տեղը պտույտ-պտույտ եր
անում, աշխատելով խուսափել հարվածնե-
րից, բայց դուր:

— Մի խփիր, մի խփիր... ճչում եր
Հարութիկը, խսկ նա քանի գնում, ավելի յեր
կատաղում ու հարվածները տեղում եյին
կարկուտի պես:

— Քաշ տուր... յես դրա...

Նրանք յերկուսով յետեից բոթեցին ու



քանդված մի գոնանի դարպասից դուրս շը-
պլրտեցին փողոց :

Եջն ընկավ առաջին վոտների վրա, քիչ
մնաց քիթ ու մոռութը գետնով տար, մի բո-
պե չհասկանալով գլխին յեկածը, մնաց այդ
դրության մեջ, իսկ մի քանի հարվածներից
ուշքի գալով, տնքալով բարձրացավ ու ան-
հույս դես ու դեն նայեց, տեսավ, վոր Հա-
րութիկը կանգնած է մոր մոտ, գլուխը թագ-
րած նրա փեշերի մեջ, իսկ մայրը, ձեռները
ծոցին լալիս եր :

Եշը հուսահատված և վոչ մի տեղից ոգ-
նություն չսպասելով, բարձրացրեց մոռութը և
զոռաց յերկար, վողբաճայն :

Հարութիկը լսելով իշուկի սրտամա-
շուկ ձայնը, թողեց մորը, վազեց, գրկեց
նրա գլուխը և պինդ-պինդ համբուրեց ճակա-
տի վրայի սպիտակ մեծ խալը :

— Քեռի, քեռի ջան, հոգուտ մատաղ,
մի տանի :

— Հաց ե, հաց ե...

— Քույրիկ, ես տղիդ քաշեյիր, թե չե-
քիթ ու բերանը արյունլվա կանեմ :

Մայրը մոտեցավ, ուժով յետ քաշեց Հա-
րութիկին, քաշեց դեպի իրեն, գրկեց, աջը
դրեց իշուկի գլխին, շոյեց մեծ գլուխը և կը-
ռանալով նրա վրա, գրեթե ականջին շնչաց
կամացուկ, այնքան կամաց, վոր միայն նա-
լսեր .

— Յարաբ կտեսնե՞ս բալեքիս... յարաբ
կճանաչե՞ն... քեզ Փոռնտ են տանում, իշուկ
ջան, ախր նրանք ել ենտեղ են, Հարոն ել,
Խաչոն ել, թէ տեսար, գիտեմ կճանաչես,
ասա, վոր ձեր մերը վոչ մեռած ե, վոչ կեն-
դանի, յեկրմտությունից հոգիս դուրս ե գա-
լիս, ասա քուն ու դադար չունեմ... ասա...

Տեսնելով, վոր արդեն հեռանում ե, կանգ-
նած տեղից կանչեց բարձրաճայն .

— Իշուկ ջան, բարե կանես...

Հարութիկը փովեց յերեսի վրա գետնին,
հեկեկանքներից պառկած տեղը վոստոստա-
լով, իսկ մայրը նայեց, նայեց իշուկի յետե-
վից և յերբ ել չերեաց, գլուխը հենեց աթա-
րով ծեփած պատին ու մնաց անշարժ :

2

Բացի ձիաների, ջորիների, ուղտերի տը-
րանսպորտից, կա նաև եշերի տրանսպորտ :

18-րդ բեռնակիր եշերի տրանսպորտը մի
ամսից ավելի յե, վոր գիրքերն ե գնացել: Հեր-
թը 19-րդինն ե, իսկ 17-րդ տրանսպորտն ար-
դեն վերադարձել ե:

Քաղաքի ծայրամասում գտնվում ե բեռ-
նակիր եշերի տրանսպորտի կայանը, գորա-
նոցը, գրասենյակը և հրապարակը՝ անհամար
ցցերով, վոր այդ ժամանակ դատարկ եր:

Մի քանի կողերը դուրս թափված իշուկ-
ներ՝ ծածկված վերքերով, կանգնած եյին

զորանոցի բակում։ Նրանք կապված չելին,
բայց անշարժ կանգնած եյին տեղերումը,
յերեմն միայն լայն ականջներն եյին շար-
ժում՝ նեղացած շոգից ու աներես ճանձերից։

Անտարբեր, անհույս նրանք կանգնած ե-
յին բակում ձյուղերը կոտրած թթենու տակ,
ծուլորեն շարժում եյին ծնոտները այնքան
դանդաղ, վոր, կասես, կերակուր չեր ընդու-
նածները, այլ խոտի տեղ ձիլով եյին ուժով
լցրել բերանները։

Յեր ծնոտները բաժանվում եյին իրա-
րից, և մի պահ սպիտակ մեծ-մեծ ատամները
մնում եյին բաց, վախենում ես, վոր այլու-
չեն փակվելու բերանները, և այդպես ել կմը-
նան բերանները բաց, շունչները կփչեն։

Հրանք արտահայտելու այն մեծ պար-
գեր, վոր շնորհված և եշերին՝ «զոռալը»,
դրանից ել զրկված եյին. զոռոցի փոխարեն
ինչ վոր խղձուկ ձայներ եյին յելնում կոկորդ-
ներից, և վախեցած, զղջալով կրկին լուսմ ե-
յին և թույլ-թույլ թափահարում գլուխները։

Դրանք 17-րդ տրանսպորտի հերոսներից
եյին, վորոնց հաջողվել եր կենդանի վերա-
դառնալ գիրքերից, մյուսները ընկան գերքե-
րում ձյունապատ լեռներում և անդնդխոր ձո-
րերում, ուր թափվեցին, յեր ծանր բեռք
մեջքներին փոքրիկ սմբակներով բաղխում ե-
յին նրանք ապառաժները, հաղիվ-հազ, զգու-
շությամբ փոխելով յուրաքանչյուր քայլը,

բայց բավական եր մի անզգույշ քայլ, և նրանք
իրար յետևից գլորվում եյին անդունդները։
Լեռնային ճանապարհների յերկու կողմե-
րում թափվում եյին ձիերի, ջորիների, եշե-
րի և ուղտերի դիմկները և նեխվում եյին, ա-
նասելի գարշահոտություն սփռելով շորս
կողմբ։

Գիշատիչ թռչունների խրախճանքը՝ հա-
գեցած լեշի մսով, հասնում եր իր գագաթնա-
դետին։

Մի փոքրիկ թիթեղյար ցուցանակի վրա
գրված ե և կպցրած անկյունում, «Յեռնակիր
եշերի արանսպորտի, կայան»։ 19-րդ տրանս-
պորտի համար գեռ վոչ մի եշ չկա, բայց զին-
վորները մի քանի շաբաթ ե, վոր հավաքված
են. հավաքել եյին գեսից-դենից անպետք,
պետքական, քոռ, քաշալ և ոռւս, հայ, վրա-
պետքական, ինչ ասես, հավաքել եյին ու խառնել ի-
ցի, ինչ ասես, հավաքել եյին ու խառնել ի-
ցար։ Վոչ վոք նրանցից վոչ մի ցանկություն
չուներ մի բան անելու, մանավանդ գիրքեր
գնալու, թեկուզ վոչ կռվի, այլ եշերի հետ
ըստներ կրելու։

17-րդ տրանսպորտից վերադարձած մի
քանի զինվորների պատմությունից մարմին-
ները սրսրթում եր, կաշին վշաքաղում։

Ազրը արեի տակ չորացել եր և ել այնպի-
սի աղբահոտ չկար։ Մի ամսից ավելի յե, վոր

Հրապարակն ամայի յե, չի լսվում եշերի սիրո
մորմոքող զուոցը: Ցցերն եյին, լուռ, ան-
շարժ ցցված գետնին, այդ լությունը խսն-
դարում եր ցածից լավող գետի ձայնը:

19-րդ տրանսպորտի եշերն ուշանում է-
յին: Մի շաբաթ ե, վոր լուրեր են պտտվում,
վոր այսորմաղը եշերը կդան, բայց չկային,
զինվորներն ուրախ եյին, գոհ:

Ինչ պետք ե անի եշերի տրանսպորտի
զինվորը, յեթե չկա եշը, առանց այդ հա-
մեստ կենդանու նա իսկի զինվոր ել չի, մարդ
ել չի:

Զորանոցներում անասելի կեղտուու-
թյուն ե, վոչ վոք չի հետեւում. ուսում, խը-
մում, թափում... հավաքող չկա, վոչ վոք վոչ
վոքից չի վախենում, անում են ինչ սրաներն
ե ուզում:

Ամբողջ որը թափառում են քաղաքի այդ
յետ ընկած փողոցներում, արևածաղկի սերմ
չըթելով, կամ, ով փող ուներ՝ հարրում եր և
հարրեցնում ընկերոջը և, մութն ընկնելուց,
գոռզուալով, հայհոյելով դալիս թափվում
նառերի վրա և խոմփացնում:

Մի քանիսը որ ու գիշեր պառկած ելի՞
մեջքի վրա, վեր եյին կենում ուտելու, խմե-
լու և ելի առանց ժամանակ կորցնելու—պառ-
կոտում: Նրանք ուտում եյին, խմում, քնում
ուրի, գործ հունեյին:

Պառկած մեջքների վրա, մախորկայի


դառը ծխից հավաքվող թուքը առատորեն
թքում եյին առանց նայելու, թե հատակին
կնկնի, նառի վրա, թե հարեանի գլխին:

Մի շաբաթում ամբողջ հրապարակը լցվեց
եշերով. ամեն ցցից մի եշ կապված:

Սև, սպիտակ, մոխրագույն, 200-ից ա-
մելի իշուկներ կապված եյին մեծ հրապարա-
կում, արեկի տակ:

19-րդ տրանսպորտի պետը տագնապի
մեջ եր: Տեսդային կերպով նա պատրաստու-
թյուններ եր տեսնում: Պետք ե սանձեր,
թամբեր, տաք զգեստներ զինվորների համար
և այլն, և այլն, այնքան բան եր պետք:

Իսկ զինվորները դեսից-դենից հավաք-
ված, վորը մի քանի անգամ վիրավորված,
վորը հիվանդության պատճառով դիրքերը
չուղարկված, մեծ թվով սիմուլյանտներ,
վորոնք կարողացել եյին գլուխ պրծացնել, ա-
միսներ, տարիներ մի բատալյոնից—մյուսը, մի
հիվանդանոցից—մյուսը թափառել, կաշո-
քով, բարեկամության չնորհիվ ազատված...
մի խոսքով, բոլոր հիվանդանոցային առնետ-
ները, վորոնք հաց եյին քոռացնում անգոր-
ծությունից ծուլացած, և այժմ նրանց համար
մահվան չափ ծանր եր կրկին գործի կպչել,
մանականդ մի ամիս մեջքի վրա պառկելուց
հետո:



Նրանք սարսափելի դժգոհությամբ, տըր-
տընջալով, բայց ճարահատված դործի կպան:

Ամեն մի զինվոր ուներ իր եշերը, վորոնց
պետք ե կերակրեր, ջրելու տաներ, մաքրեր
տակերը, թիժարեր, դիշերներն ել պահակ
կանգներ, կավող եշերին բաժաներ, ցցից փա-
խած եշերի յետելից ընկներ, բռներ, բերեր ու
տեղը կապեր և այլն...

Եշերի գալուց հետո մնաք բարով, նառեր,
ել պրծավ նրանց յերջանկության որերը:

Ամենից յերջանիկը եշերն եյին, նույնիսկ
տրանսպորտի պետից ել ավելի:

Պարապ-սարապ կապված ցցերից թարմ
ողում, լավ ուտում եյին ու պարաբռանում:

Յերեկոները հրապարակում անասելի կեն-
դանություն եր տիրում:

Ամեն կողմից լսվում եյին գոռոցի ձայ-
ներ, թեև իրարից բավականին հեռու եյին
կապված, բայց քացահարում եյին իրար, չկա-
րողանալով աչքի չափով վորոշել, վոր զուր ե,
քացիները նպատակին չեյին կարող հասնել, և
փոքրիկ ամբակները զնդակների նման թռչո-
ուում եյին ողի մեջ:

Մի քանիսը, վորոնց հաջողվում եր կտրել
թոկը, կամ պոկել ցիցը, ուրախ՝ ազատ կա-
պանքից, դեռ ու դեն եյին վազում, զռաւլով,
եշերի արանքները մտնում, քացահարում ու
քիթը քամի մտած՝ պոչը վեր բարձրացնում և
զռռաւլով փախչում:

Ինքն ել չգիտեր՝ ի՞նչ ե ուզում, ո՞ւր ե գնում, հարվածում եր, ինքն ել քացիներ ու-
տում, բայց առանց հուսահատվելու խարիս-
փում եր կապված եշերի մեջ։ Ահա հակառակ
ծայրում մի ուրիշ եշ հաջողեցրեց պոկել ցիցը,
և սկսվում ե եշերի մեջ իրարանցում, դռոց-
ների թիվը շատանում ե, մինչ վրա յեն հաս-
նում պահապան զինվորները և, ծեծելով նը-
րանց, տանում կապում են նախկին տեղերը՝
հայՀոյելով ռիտը պորտը։

Հայերը, վրացիները ծիծաղում եյին ուսու-
ղինվորների վրա, վոր վարվել չգիտեյին եշե-
րի հետ, սովորեցնում եյին նրանց եշերի լե-
զուն, բայց նրանք մի ամոթխած ժպիտ գեմք-
ներին՝ թքում եյին ու ասում։

— «Եշ քչող ել դառնանք»...

Ինչ վոր հեքիաթային բան կար կապույտ
մշուշով պատած հրապարակում լուսնկա դի-
շերներին։

Լսվում եր հարյուրավոր եշերի մնչոց, վո-
րոձարու ձայներ. . . յերեմն անհասկանալի
պառաճառներից վողերպած՝ մեկն ու մեկը
բարձրացնում ե դունչը ու յերկար յելեվինե-
րով զոռում ու խանդարում այդ մոնուոն ան-
դորրը։

Շրջապատ սարերը թույլ արձագանգում
եյին այդ վողբին ու նորից հեքիաթն եր շա-
րունակվում՝ լուսով շաղախված։

Հերթապահ զինվորները՝ փաթաթված շի-
նելների մեջ, կուչ եյին յեկելհրապարակի զա-
նազան կողմերում, իսկ գիշերապահ ունտերը
յերկրորդ անգամ յեկավ ստուգելու պահակնե-
րին և մեկին ապտակեց՝ քնած գտնելով։

Հրամանը կտրուկ եր.

«19-րդ բեռնակիր եշերի տրանսպորտին—
1915 թվի սեպտեմբերի 3-ին դուրս գալ դեպի
տաճկական ֆրոնտ»։

«Լինել կազմ ու պատրաստ սեպտեմբերի
յերկուսի առավոտը ժամը 9-ին զորատեսի»։

Գեղեցիկ սարքով, առանց ծանրության,
յերկու շաբաթ լավ ուտելուց, գերանալուց
հետո, ուրախ-ուրախ զռուալով, իրար առաջ
կտրելով, իրար հրելով՝ 19-րդ տրանսպորտը
դուրս յեկավ դեպի Փրոնտ։

Յերկու հարյուր հիսուն եշ անցնում եյին
նեղ փողոցներով, անց ու դարձ անողները սեղմ-
վում եյին պատերին, վոր ճանապարհ տան-
դեպի Փրոնտ գնացող հերոսներին։

Մենակ Հարութիկի եշն եր տխուր, նա
շարունակ յետ եր մնում և դլուխը կախ՝ դան-
դաղ հետեւում եր քարավանին։

Ի՞նչ մտքեր եյին պաշարել նրան, ո՞վ կա-
րող ե ասել, թե ի՞նչ մտքեր կարող են լինել

Եշի դլխում, գուցե շատ բարդ փիլիսոփայական, գուցե գարուց այն կողմը չելին անցնում նրա մտածմունքները, ի՞նչ եր տիրության պատճառը— անհայտ է, բայց վոր մըռուայլ ե ու տիրուր, այդ շատ պարզ յերեսում եր: Յերբեմն կանգ եր առնում, հոտոտում գետինը ու գլուխը բարձրացրած, շրթունքները վեր ցցում, լնդերը բացում և մեծ-մեծ առողջատամները գեմ անում յերկնքին:

Այդ պողայի մեջ նա յերեխ շատ կմնար, յեթե չզգար յետի մասի վրա ճիպոտի դադող հարվածը և վիշտ, թախիծ մոռացած՝ չշտապեր խառնվել խմբին:

Կայարանում տախտակների վրայով մի կերպ քեզին նրանց վագոնները, փակեցին գերաններով դուռը և նրանք սլացան առաջին անդամ իրենց կյանքում յերկաթե ուղիով:

Յերկաթգիծը, քաղաքներ, դյուզեր, մարդիկ, ամեն բան յետ եր մնացել:

Լեռներ, լեռներ, քարքարոտ ձանապարհներ, անանցանելի կիրճեր, դիք զառիվայրներ, նեղ անդղախոր ձորերի բերանին հաղիվ վոտք փոխելու բարակ, նեղ, սահող ավազի ձանապարհներ:

Բավական ե մի անզգույշ քայլ և անդունդը բացբերան պատրաստ ե կլանելու՝ մասդ, ձի, ուղտ ու եշ:

Աղմուկով, հայնոյանքներով քշում եյին եշերի քարավանը, նրանք տնքալով, հեւալով են փոխում յուրաքանչյուր քայլը:

Վիզները յերկարել ե, բայց պետք ե հաղթահարել վերելքը, նրանց սպասում են այնտեղ քաղցից, ծարավից, անքնությունից տանջված զինվորները:

Յեթե այդ իշուկներն իմանային՝ ինչ բարի գործ են կատարում, այդպես զանդաղ չեցին փոխիլ քայլերը, այդքան տիսուր չելին լինիլ, այլ գիտակցելով իրենց գործի կարեռությունը, խրախուսված, վոր իրենց կարողացածի չափով նպաստում են պատերազմի բարեհաջող վախճանին, ավելի աշխույժ կըշարժվելին: Բայց դե նրանք այդ իմպերիալիստական տեսակետը չունեյին, նրանց համար կատարելապես մեկ եր, թե ո՞վ կհաղթի, միայն թե չուտ աղատվելին այդ ահոելի տանջանքներից, այդ ծանր բեռից:

Ու այդ գիտակցությունից գուրկ՝ նրանք փոխում եյին իրենց ամեն մի քայլը, տնքալով, մտրակների հարվածների սպառնալիքների տակ:

Թե զինվորները, թե եշերը հոգնել եյին, նրանք հաղիվ-հազ եյին քայլում, բայց պետք ե հասնելին հանգստի կայանը և ապա ելի շարունակելին սարերով գնալ, անվերջ՝ անվերջ...

Դեռ մի ամիս չկա, վոր 19-րդ տրանսպորտը աշխատանքի յե անցել. ցրտից, քաղցից, հոգնածությունից, շարքերը նոսրացել են, այլևս յերդ ու ծիծաղ չեր լսվում, դադարել եյին զողոացնել, բոլորը դլուխները կախդեալի հանդստի կայանն եյին դնում:

Շարքերը որ-որի վրա նոսրանում եյին:

Լեռնային ճանապարհի յերկու կողմերում թափված եյին լեշեր ու հոտում եյին, վորդնում: Մարդիկ ել ծծվել եյին այդ գարշահոտությամբ, կարծես, իրենք ել նեխվում եյին, այնպես եր կպէլ այդ հոտը նրանցից:

Մի շաթաթ հետո այլևս 19-րդ տրանտպորտից շատ քիչ բան մնաց: Հոգնած ուժապառ, թափվում եյին եշերը բեռան հետ և ել անկարող եյին վեր կենալու:

Փորձում եյին նրանց բարձրացնել, ճիպոտի հարվածներից նրանք լարում եյին մնացած ուժերը, մի վերջին ճիգ անում վոտի կանգնելու, բայց անկարող՝ քիչ բարձրացած դլուխը անողնական կրկին դետնին եր կպչում:

Պոչից եյին ձգում, դուգուում, բայց զուր... նա այլևս չի բարձրանալու:

Բեռը, թամքը, սանձը հանում եյին և թողնում սատկող անսառնին, իսկ իրենք շարունակում ճանապարհը:

Ամիս ու կես անց այն որից, յերբ վագոն մտան, 19-րդ տրանսպորտից 20 եշ եր մնացել:

Հրաման ստացվեց վերադառնալ. ամեն մի


զինվոր 7-8 եշ ուներ, այժմ ամեն մի եշ՝ 7-8 զինվոր: Զինվորներից շատերն ել հիվանդազարդում: Զինվորներից շատերն ել 19-րդ տրանսպորտը ջարդված, ցան, մեռան և 19-րդ տրանսպորտը ջարդված, քայլապարհած, ուժասպառ, ֆրոնտում թողնելով յերկու հարյուրից ավելի եշ, վերադառնում ե տուն:

Կողերի վոսկորները դուրս ցցված, վզները բարակել և մարմինները ծածկվել վերքերով: Նրանք իջնում եյին գեպի ցած, յերբ նրանց ականջին հասան ձայներ, և քիչ անց գեմ-դիմաց յեշավ 20-րդ տրանսպորտը: Առույգ, կայտառ, զեռ թարմ ուժերով եշերը յերբ տեսան գեմուգեն իջնող եշերին, ականջները ցցեցին և ուրախ զուացին, վողջունելով իրենց անծանոթ ցեղակիցներին, հոտուցին և գլուխները թափահարելով, մոռութները վեր քաշեցին: Բայց ֆրոնտից մերադրձողները չպատասխանեցին նրանց ուրախ վողջունին, նրանք անուշադիր թողին այդ ուրախ հանդիպումը, անտարբեր, առանց գլուխներն իսկ բարձրացնելու, նրանք կանգ առան, սպասելով, վոր 20-րդ տրանսպորտուն անցնի, և ապա միայն սայթաքելով, որորվելով շարժվեցին առաջ:

20-րդ տրանսպորտի մարդիկ, լսելով 19-րդ տրանսպորտի մարդկանց պատճաճները, հայտ յուհյանքները և տեսնելով այդ վողորմելի յեկավ վրաները, հուսահատություն քարավանի դրությունը, հուսահատություն յեկավ վրաները, մտածելով, վոր իրենք ել

ամիս ու կեսից հետո նույն դրության մեջ
պետք է վերադառնան, ո՞վ սաղ... ո՞վ մե-
ռած...

Բախտի բերմունքով Հարութիկի են ել
ազատվել եր մահվան ճանկերից, բայց ել
դժվար եր ճանաչել, ճակատի սպիտակ խաղն
եր մնացել, այն ել կեղտոտվել, տկանջները
թույլ-թույլ կախվել եյին:



42034

ԳԻԱԸ 75 Կ.

Մ. ԽԱՎԵԼՅԱՆ
ЭПИЗОДЫ ИЗ ЦАРСКОЙ
АРМИИ
ГИЗ ССР Армении